Armenian
Discerning the body of the Lord
59-0812

# Sermons By
# William Marrion Branham

*"… in the days of the voice …" Rev. 10:7*

## ԶԱՆԱԶԱՆԵԼ ՏԻՐՈՋ ՄԱՐՄԻՆԸ

Միդլթաուն, Օհայո ԱՄՆ
Օգոստոսի 12 1959 թ. երեկո

## Introduction

The remarkable ministry of William Branham was the response of the Holy Spirit to the prophecies of the Scriptures in Malachi 4:5,6, Luke 17:30, and Revelations 10:7. This worldwide ministry has been the culmination of many other Bible prophecies, and a continuation of the working of God by His Spirit at this End time. This ministry was spoken of in the Scriptures, to prepare the people for the Second Coming of Jesus Christ.

We pray that the printed Word will become written in your heart as you prayerfully read this message.

While every effort has been made to provide an accurate unabridged transcription, the English audio files are the best representation of the sermons spoken by Bro Branham.

Audio and transcribed versions of over 1,100 sermons preached by William Branham are available for free downloading and printing in many languages at:

## www.messagehub.info

This work may be copied and distributed as long as it is copied entirely, not modified, and distributed free of charge.

իրենց շարժասայլակներից և պատգարակներից:
127 Ձեր հերթն է, Սուլիվան եղբայր:

# ՁԱՆԱՁԱՆԵԼ ՏԻՐՈՋ ՄԱՐՄԻՆԸ

1 Բարի երեկո, սիրելի բարեկամներ: Նստեք, խնդրում եմ: Ես ուրախ եմ այս երեկո լինել այստեղ, այս հրաշալի քրիստոնյաների շրջանում: Եվ մենք սպասում ենք, որ Աստված այս երեկո շատ ավելին անի, քան մտածում ենք կամ պատկերացնում: Մենք գիտենք, որ Նա իրական է:

2 Ձեզանի՞ց քանիսն են զգում, որ բժշկվել են երեկ երեկոյան բժշկության ծառայությունից հետո... հրաշալի է: Կարծում ենք, որ մնացածներն էլ այս երեկո կբժշկվեն: Կարծեմ՝ մի քանի աղոթքի թերթիկ էլ ունենք: Բիլլին ասաց, որ չի բաժանել, որովհետև երեկ երեկոյան միայն մի քանի հատ էինք վերցրել: Գուցե մի քանիսը ցանկանան աղոթքի շարքի մեջ կանգնել ուշ երեկոյան, կամ կուզենային շարքում կանգնել, երբ գործում է զանազանության պարգևը:

3 Զանազանությունը չէ, որ բժշկում է: Դա միայն մարդուն դնում է մի վիճակում, որ նա կարողանում է քննել և ընդունել այն բժշկությունը, որը Հիսուս Քրիստոսը ձեռք է բերել իր համար: Ձեռնադրությունը հրաշալի է, Սուրբ Գրքի համաձայն է, բայց դա հեթանոսներին բժշկություն բերելու համար ընտրված եղանակը չէ:

4 Աստվածաշնչում ասվում է, որ մի հրեա հիվանդ աղջիկ ուներ, որը մահացավ: Նա ասաց Հիսուսին. *«Աղջիկս վախճանվելու մոտ է, արի՛, ձեռքդ վրան դիր, որպեսզի բժշկվի ու ապրի»*: Բայց հռոմեացի հարյուրապետը՝ ազգերից եկող հեթանոսը, որ հիվանդ ծառա ուներ, ասաց. *«Տե՛ր, ես արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնես, այլ միայն մի խոսք ասա»*: Հենց դա հուզեց Հիսուսի սիրտը: Նա ձեռնադրության կարիք չուներ, պարզապես ուզում էր լսել Խոսքը:

5 Գիտեք, ես սիրում եմ այն պատմությունը, որովհետև հռոմեացին ընդունեց, որ Հիսուսը իշխանություն ունեցող մեկն էր: Եթե ինքը մի մարդու ասում էր՝ «արա այս», կամ «արա այն», նա անում էր: Նա ճանաչեց նույն իշխանությունը Տեր Հիսուսի մեջ: Որովհետև հարյուրապետը գիտեր, որ եթե Հիսուսը ասեր Իր աշակերտներից մեկին՝ «գնա» կամ «արի», նա պետք է հնազանդվեր: Նա նաև գիտեր, որ բոլոր հիվանդությունները ենթարկվում են Տեր Հիսուսի իշխանությանը: Ուրեմն Նա կարիք չուներ հարյուրապետի ծառայի վրա ձեռք դնել: *«Միայն մի խոսք ասա և իմ ծառան կբժշկվի»*:

6 Հիսուսը զարմացավ և ասաց. *«Իսրայելում էլ այսպիսի հավատք չգտա»*: Ո՛հ, ես կուզենայի ապրել այնքան, որ տեսնեի, թե ամերիկացիները երբ այդպիսի հավատք կունենան: *«Միայն մի խոսք ասա, Տե՛ր, և իմ ծառան կբժշկվի»*: Ո՛հ, դա փառավոր օր կլինի:

7 Երբեմն, երբ օծությունը շատ խորն է... եթե երբեմն ես հնարավորություն չեմ ունենում խորանի մոտ կանչելու, Սալիվան եղբայրը կամ մեկ ուրիշ եղբայր կանեն իմ փոխարեն: Ոմանք կարող են ասել, որ մենք չափազանց մեծ կարևորություն ենք տալիս աստվածային բժշկությանը: Բայց աստվածային բժշկությունը ծկնորսության նման է: Դուք երբեք կարթը ցույց չեք տալիս ձկանը: Դուք ցույց եք տալիս խայծը: Ձուկը նետվում է խայծի վրա և կարթն է ընկնում: Նույնն էլ աստվածային բժշկությունը: Այն գրավում է, որովհետև ապացույցն է այն բանի, որ կա ամենակարող Աստված, որ հետաքրքրվում է ձեզանով: Եվ անհավատը կարողանում է տեսնել: Նրա աչքերը անմիջապես նկատում են և տեսնում, որ կա կենդանի Աստված, և նա ընտրում է փրկության ճանապարհը: Այնժամ Աստված կարող է գործել նրա մեջ և գրավել դեպի Իրեն: Ահա թե ինչու կան բժշկության ծառայություններ:

8 Այստեղ կան եղբայրներ, որոնք ձայներիզներ, գրքեր և սկավառակներ ունեն և ստեղծել են մի փոքրիկ կենտրոն, որի մասին իրենք են հոգ տանում: Ես ինքս ունեմ այդ գրքերից մի քանիսը, իսկ մյուսները պետք է գնեմ: Նրանցից մի քանիսը ինձ են պատկանում՝ քարոզները: Մնացածները գնում են Լինդսեյ եղբորից: Կա «Իմ կյանքի պատմությունը» գիրքը և «Մի մարգարե է այցելում Աֆրիկան»: Կան նաև իմ քարոզներից երեք-չորս հատ: Դրանք այստեղ են ոչ թե փող վաստակելու համար, այլ պատգամը տարածելու: Դա է կարևորը:

9 Տարածեք պատգամը, որովհետև շատ ավելի ուշ է, քան մենք կարծում ենք: Մենք այս ժամանակաշրջանի վերջում ենք, իսկ եկեղեցին սարսափելի վիճակում է: Մենք փորձում ենք պարզապես արևի մի շող բերել ժողովուրդներին: Մենք չենք փորձում նրանց դարձնել դեպի մեր դավանանքները, այլ մղել նրանց ավելի մոտ լինելու Տեր Հիսուսին և հավատալ Նրան: Մենք չենք ուզում մի եկեղեցուց անդամներ հանել ուրիշ եկեղեցի տանելու համար, այլ կամենում ենք, որ ավելի շատ անդամներ լինեն Եկեղեցում:

10 Մինչև Սուրբ Գիրքը բացելը այս երեկոյան պատգամի համար, որը կարճ է լինելու, ևս մի խոսք եմ ուզում ասել: Չենք ուզում ձեզ երկար պահել, որովհետև ձեզանից շատերը հեռվից են գալիս և դուք պետք է տուն գնաք՝ շարունակելու համար ձեր գործերը: Մենք ուրեմն կսպասենք շաբաթ երեկոյին, որ ձեզ ավելի երկար պահենք: Իսկ կիրակի օրը կարիք չկա, որ կիրակնօրյա դպրոցում լինենք ժամը 9:30-ից շուտ: Այժմ խոնարհենք մեր գլուխները կարճատև աղոթքի համար:



121 Հավատք ունեցեք Աստծո հանդեպ: Ձեզանից ոմանք ինչ-որ տեղում աղոթում են: Հայտնի արա, Տեր, որ Դու ես Աստվածը:

122 Մի կին է կանգնած իմ առջև և աղոթում է: Նա դահլիճում է: Նա բարդություններ ունի: Նա կարմիր և սպիտակ վանդակներով զգեստ է հագել: Նրա ազգանունը Լեյք է: Որտե՞ղ եք, դուք, տիկին Լեյք: Խնդրում եմ, վեր կացեք: Աստված օրհնի ձեզ: Տուն վերադարձեք և բժշկվեք: Ձեր հավատքը ձեզ փրկեց:

123 Նույն Հիսուսն է: Նույն Հրեշտակն է: Ունե՞ք զանազանություն՝ զանազանելու համար Տիրոջ Մարմինը: Հավատու՞մ եք, որ ձեզ ասում եմ ճշմարտությունը: Հավատու՞մ եք, որ Քրիստոսն է վկայում այդ մասին: Եթե հավատում եք, բարձրացրեք ձեր ձեռքը: Այստեղ քանի՞ հավատացյալներ կան, որոնք ուզում են այսպես ձեռքով նշան անել: Դուք հավատում եք, որ ես Աստծո մարգարե եմ: Ոչ մի կասկած մի ունեցեք: Դրեք ձեր ձեռքերը ձեր կողքին նստածների վրա, և կտեսնեք Աստծո փառքը: Նա կարող է ցույց տալ Իր փառքը: Կարո՞ղ եք զանազանել Տիրոջ Մարմինը: Կարո՞ղ եք զանազանել, որ Նրա Հոգին ներկա է այստեղ: *«Նրանց էլ, ովքեր կհավատան, այս նշանները կհետևեն... հիվանդների վրա ձեռքերը կդնեն, ու նրանք կառողջանան»*:

124 Տեր Աստված, երկնքի և երկրի Արարիչ, հավիտենական կյանքի Հեղինակ, այնպես արա, որ սատանան հեռանա այստեղ գտնվող բոլոր հավատացյալներից: Նրանք ձեռք են դնում միմյանց վրա և հավատում են: Նրանք հավատում են Աստծուն, հավատում են, որ Դու ես անում այդ բաները, ով Տեր: Քո Խոսքերը արդյունավետ են, ինչպես Քո խոստումները, իսկ Դու խոստացել ես. «Հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան»:

125 Այժմ, սատանա, անօրեն դև, որ մարդկանց ճնշում ես և հասցնում հողին, ես քեզ հրամայում եմ Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որդու Անունով, հեռացիր նրանցից: Դուրս եկ նրանցից Հիսուս Քրիստոսի Անունով:

126 Ձեռք դրեք միմյանց վրա և աղոթեք հավատքի աղոթքով, և երբ կտեսնեք, որ Սուրբ Հոգով զանազանում եք, որ դա Աստծո խոստումն է ձեզ համար, այնժամ յուրաքանչյուրդ կզգաք, որ Աստծո զորությունը մտնում է ձեր մեջ, ուրեմն վեր կացեք և ընդունեք ձեր բժշկությունը: Ես պատվիրում եմ բոլոր հավատացողներին Հիսուս Քրիստոսի Անունով, վեր կացեք և ընդունեք Հիսուսին, որպես ձեր անձնական Բժիշկ: Վեր կացեք դուք, որ շարժասայլակներում եք, պատգարակների վրա: Վեր կացեք: Հավատացեք Աստծուն: Տեր Հիսուս Քրիստոսի Անունով բժշկված եղեք: Նրանք վեր են կենում

Դուք աղոթքի թերթիկ ունե՞ք, տիկին: Ո՞չ: Դուք չունեք էլ դրա կարիքը: Դուք հավատու՞մ եք, որ բավարար հավատք ունեք դիպչելու համար… ինձ չեք դիպչել, այլ Նրան: Լավ: Ուրեմն բարձրացրեք թաշկինակով ձեր ձեռքը և ընդունեք ձեր բժշկությունը: Տուն վերադարձեք բժշկված Հիսուս Քրիստոսի Անունով:

114 Ուշադրություն: Այնտեղ մի կին կա վանդակավոր զգեստ հագած: Նա խոնարհել է իր գլուխը և աղոթում է իր հոր համար: Նրա հայրը տառապում է լյարդի պատճառով: Քույր, հավատու՞մ եք, որ Տերը նրան կբժշկի: Հավատու՞մ եք: Ուրեմն կստանաք:

115 Տիկին, շատ սիրալիր էր ձեր կողմից նրան ասել, որ դա իրենն էր: Դուք այդ արեցիք, որովհետև Սուրբ Հոգին իջավ ձեզ վրա: Դա ճիշտ է: Դուք աղոթքի թերթիկ ունե՞ք: Ո՞չ: Դա ձեզ պետք չի: Դուք աղոթում եք ձեր մոր համար: Դուք կարծում եք, որ կկարողանաք վաղը երեկոյան նրան եկեղեցի բերել: Դա ճիշտ է: Դա պարտադիր չէ: Ձեռք դրեք նրա վրա և կանչեք Հիսուսի Անունը: Նա կբժշկվի, եթե հավատում եք:

116 Ես մարտահիրավեր եմ նետում ձեր հավատքին: Ո՞վ չունի աղոթքի թերթիկ և հավատում է:

117 Դուք, որ առջևում եք: Հավատու՞մ եք, որ ես Աստծո մարգարե եմ: Մարգարեն ժամանակաշրջանի պատգամ բերողն է: Հավատու՞մ եք, որ ունեմ Աստծո պատգամը: Հավատու՞մ եք: Ես ձեզ չեմ ճանաչում, բայց Աստված ճանաչում է ձեզ: Եթե Աստված ինձ ցույց տա ձեր դժվարությունները, կընդունե՞ք դա որպես ձեր բժշկություն… կհավատա՞ք, որ այդ Նա է: Այնժամ կարո՞ղ եք զանազանել: Եթե ձեր հոգին կարողանա դիպչել Նրան, մինչ ես խոսում եմ, կընդունե՞ք ձեր բժշկությունը: Ինչ-որ բան կա ձեր կրծքավանդակում: Դուք քարոզիչ եք: Դա ճիշտ է: Այսպես է ասում Տերը: Հավատացեք Աստծուն:

118 Ես մեջքով կկանգնեմ: Աղոթեք: Տեսեք, դա նույն Հրեշտակն է: Տեսեք, մի՞թե Նա նույն Աստվածը չէ, որ խոստացել էր, մեջքով վրանին կանգնած: Աղոթեք, որ Աստված ուղարկի Իր Հրեշտակին և ապացուցի, որ Սոդոմը… որ վերջը շատ մոտ է:

119 Ո՛հ, Տեր Աստված, ուղարկիր այս երեկո Քո Հրեշտակին և տուր նույն զանազանությունը, որովհետև դա Քո Որդու տված խոստումն է: Թող այդպես լինի:

120 Իմ առջև մի կին եմ տեսնում: Նա գլխում կատառ ունի: Նա ներքևում է, այն ուղղությամբ: Ես զգում եմ նրա հավատքը: Նրա ազգանունն է տիկին Վիլի: Ու՞ր է նա: Տեսնենք: Այնտեղ, խորքում: Ինչ էլ լինի… Ճի՞շտ է, տիկին: Լավ: Ուրեմն վերադարձեք տուն և բժշկված եղեք:



11 Տեր, մենք անչափ շնորհակալ ենք, որ առիթ ենք ունեցել գալու և խոնարհվելու կենդանի Աստծո առջև` իմանալով, որ ստացել ենք Նրա սուրբ Որդու` Տեր Հիսուսի խոստումը, որ մենք կարող ենք ստանալ այն, ինչ խնդրում ենք, եթե խնդրենք Հորը Տեր Հիսուսի` Իր Որդու անունով: Եվ մենք վստահություն ունենք, որ մեր աղոթքը կլսվի, եթե գանք Հիսուսի անունով: Որովհետև Նա ասել է. *«Ինչ որ կամենում եք, Հորից խնդրեք Իմ անունով, և կստանաք»*: Մենք այս երեկո բացարձակապես վստահ ենք, որ Նա մեզ լսում է, և մեր խնդրածը կշնորհվի մեզ, որովհետև զգում ենք, որ մեր խնդրանքը Իր կամքի համաձայն է: Որովհետև Նա ասել է. «Դուք չեք ստանում, որովհետև չեք խնդրում, որովհետև չեք հավատում»: Տեր, պատճառը, որի համար մենք եկել ենք այստեղ, այն է, որ մենք հավատում ենք, որ Դու կպատասխանես, և մեր աղոթքները միայն մարդկանց չեն լսելի լինի, այլ հավատում ենք, որ Դու ես մեզ լսում և վստահ ենք, որ կպատասխանես, որովհետև խոստացել ես: Մենք ուրիշ ոչինչ չենք ուզում խնդրել, այլ միայն. «Թող Քո կամքը լինի»: Տեր, այս երեկո, թող ամեն մեղավոր, որ դեռ Քեզ չի ճանաչում որպես Իր Փրկչի… թող այս երեկո ասվի կամ արվի մի բան, որ նրանց կմղի Քեզ ընդունելու որպես իրենց Փրկիչը:

12 Նրանք, ովքեր Սուրբ Հոգի չեն ստացել և սպասում են ամբողջ սրտով, թող այս երեկո թեփուկներն ընկնեն նրանց աչքերից, և նրանք ընդունեն Նրան: Ո՛հ, Տեր, թող Սուրբ Հոգին այս երեկո լցնի նրանց սրտերը: Թող Սուրբ Հոգու այնպիսի ներգործություն լինի, որ հոգիները ցնցվեն այնպես, որ ամեն կասկած և տարակուսանք հեռանա նրանցից, որ Սուրբ Հոգին մտնի նրանց կյանքի մեջ և կնքի նրանց Աստծո թագավորության համար:

13 Տե՛ր, շնորհիր, որ հավաքույթի վերջում ոչ մի հիվանդ չլինի մեր մեջ: Թող յուրաքանչյուրը բժշկվի: Մենք չենք մոռանում, որ հիվանդանոցներն ու բանտերը լի են մարդկանցով, որոնք այնքան ունեն Քո ողորմության կարիքը: Ո՛հ, Տեր, եղիր նրանց հետ:

14 Եվ երբ այս երեկոյան գնանք այստեղից, կարողանանք աշակերտների նման ասել. «Այսօր զարմանալի բաներ տեսանք»: Եվ թող մեր սրտերը վառվեն մեր մեջ, երբ վերադառնանք տուն: Մենք Քեզ ենք վստահում, մեր Փրկիչ, որ մեզ այդ բաները շնորհես Քո խոստումի համաձայն, իսկ Քո խոստումը միշտ Քո կամքն է: Խնդրում ենք Հիսուսի անունով: Ամեն:

15 Եթե ուզում եք բացել Սուրբ Գիրքը, ես ձեզ առաջարկում եմ կարդալ 1Կորնթ. 11-րդ գլուխը: Կսկսենք 23-րդ համարից:

16 «Որովհետև ես Տիրոջից եմ ընդունել այն, ինչ ձեզ եմ ավանդել.

որ Տեր Հիսուսն այն գիշեր, երբ մատնվեց, հացը վերցրեց և գոհանալուց հետո կտրեց ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը, որ ձեզ համար է կոտրվում. այս արեք իմ հիշատակի համար»: Այդպես էլ ընթրիքն ուտելուց հետո բաժակը վերցրեց ու ասաց. «Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունով. քանի անգամ, որ խմեք, այս արեք իմ հիշատակի համար»: Որովհետև քանի անգամ, որ այս հացն ուտեք ու և այս բաժակը խմեք, Տիրոջ մահն եք պատմում, մինչև որ նա գա: Ուրեմն ով որ ուտի այս հացը կամ Տիրոջ բաժակը խմի անարժանաբար, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին ու արյունին»: (Ես քարոզիս թեման կվերցնեմ 29-րդ համարից):

17 «Ուրեմն ով որ ուտի այս հացը կամ Տիրոջ բաժակը խմի անարժանաբար, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին»: (Սպասեք, սխալ կարդացի):

18 «Որովհետև անարժանաբար ուտողն ու խմողն իր անձի համար դատապարտություն է ուտում ու խմում, որ չի զանազանում Տիրոջ մարմինը» (ես լացել եմ այս Աստվածաշնչի վրա. ջնջված հատվածներ կան):

19 Այս երեկո իմ քարոզի թեման կլինի՝ «Զանազանել Տիրոջ Մարմինը»:

20 Մեր հավիտենական ճակատագիրը կախված չէ այն բանից, թե ինչ ենք տեսնում և ինչ ենք լսում, այլ այն բանից, թե ինչպես ենք զանազանում մեր տեսածն ու լսածը:

21 Պողոսը նրանց չէր հանդիմանում հաղորդությանը մասնակցելու համար: Նրանց գործողությունը ճիշտ էր, բայց զանազանումը՝ սխալ: Իրականում Տերունական Ընթրիքը վերցնելը Տիրոջ պատվիրանն է, բայց անարժանաբար մասնակցելը առանց Տիրոջ մարմինը զանազանելու, վատ բան է:

22 Այդ քրիստոնյաները մասնակցում էին Տերունական Ընթրիքին, բայց քրիստոնեական կյանքը չէին ապրում: Քրիստոնյա լինելը փորձառություն է և կենսակերպ: Իսկ այդ քրիստոնյաները ապրում էին, ինչպես ուզում էին և իրենց հավատքի մասին խղճալի օրինակ էին տալիս: Եվ Պողոսն ասում է. «Դրա համար ձեզանից շատերը հիվանդ ու ցավագար են, շատերն էլ ննջում են», ինչը նշանակում է, որ նրանք մեռած են, որովհետև չեն զանազանել Տիրոջ մարմինը:

23 Եվ մենք, որ մեզ քրիստոնյա ենք կոչում, իրավունք չունենք Տերունական Ընթրիքին մասնակցելու, եթե աշխարհի առաջ անարատ կյանքով չենք ապրում. մենք դրա իրավունքը չունենք: Տերունական Ընթրիքը նրանց համար է, ովքեր արդարության մեջ են ապրում, օրինակելի քրիստոնյաներ են:



Մարմնի մեջ: Հավատու՞մ եք դրան: Նույն Հոգին է, որ ուղեկցել է Իսրայելի զավակներին, նույն Աստվածն է:

107 Հիսուսն ասում է. «Ես եմ անապատում եղած ժայռը: Ձեր հայրերը մանանան կերան և մեռան: Բայց ես երկնքից իջած Կյանքի Հացն եմ, որ Աստծուց է գալիս: Ես եմ այդ Հացը, ես եմ այդ ժայռը»:

108 «Դու ասում ես, թե տեսել ես Աբրահամին, բայց դեռ հիսուն տարեկան չկաս»:

109 Նա պատասխանեց. «Աբրահամից առաջ եմ ես»: Ո՞վ էր ԵՍ ԵՄ-ը: Դա այն Լույսն էր, որը մորենու մեջ էր, և խոսում էր Մովսեսի հետ: Այս երեկո ներկա է նույն Հիսուսը: Ինչպիսի՜ հայտարարություն: Ես ձեզ կոչ եմ անում: Թող ամեն հավատացյալ հավատա դրան:

110 Այնտեղ նստած այն կինը, որ ինչ-որ սպիտակ բան ունի իր գլխարկի վրա… դուք աղոթքի թերթիկ ունե՞ք: Դուք հիվա՞նդ եք: Չէ՞ որ մենք լիովին անծանոթ ենք իրար: Բայց Աստված երկուսիս էլ ճանաչում է: Լույս կա այդ կնոջ գլխավերևում, եթե կարող եք տեսնել, այն պտտվում է նրա գլխավերևում: Նա աղոթում էր: Այդպե՞ս չէ: Դուք գիտեիք, որ առաջ գալու ոչ մի հնարավորություն չունեիք, բայց աղոթում էիք: Ես տեսնում եմ, որ վերևում մի ստվեր կա… դա մահն է: Այդ կինը ծածկված է մահվան ստվերով: Նա քաղցկեղ ունի: Հավատու՞մ եք, որ Աստված կարող է ձեզ բժշկել: Դա կրծքի քաղցկեղ է: Ես տեսնում եմ, որ բժիշկը քննում է նրան. նա ասում է, որ կփորձի վիրահատել, և ահա պատրաստվում եք վիրահատության: Ես հիմա տեսնում եմ, որ դուք իջնում եք բեմից: Դուք քարոզիչ եք, կին քարոզիչ: Այսպես է ասում Տերը: Ճի՞շտ է, տիկին: Այն, ինչ Նա ասաց, այդպե՞ս է: Կանգնեք, եթե այդպես է:

111 Լավ, հավատու՞մ եք, որ… Կարո՞ղ եք զանազանել, որ Նա նույն Հիսուսն է, որին դիպչեց այն կինը… դիպչեց Նրա հագուստին: Դա ինձանից չէ, այլ Նրանից: Ես չեմ ճանաչում այս կնոջը: Նա էլ ինձ չի ճանաչում: Բայց Աստված ճանաչում է երկուսիս էլ: Թող Աստված օրհնի ձեզ, քույր:

112 Ես մի կին եմ տեսնում տեսիլքի մեջ: Նա աղոթում է: Երիտասարդ կին է: Նստած է հենց այստեղ: Ինչ-որ բան կա փոքրիկ մանկիկի վերաբերյալ: Նա ուզում է… նա վիժում է ունեցել: Երեխան մահացել է: Նա Քենթուքիից է, նրա ազգանունը Մարթին է: Ահա և նա: Նա դեղին շրջազգեստով է: Ճի՞շտ է, տիկին: Կանգնեք, եթե ճիշտ է: Ես չեմ ճանաչում այդ կնոջը: Բայց Աստված ճանաչում է նրան: Օրհնյալ լինի Տեր Աստծո Անունը:

113 Հենց նրա հետևում մի կին կա: Նա տառապում է թութքից: Ցավեր ունի աջ կողմում: Դա մի քիչ հաղթանդամ կին է, մուգ շրջազգեստով:

Աստված անսահման է: Անշուշտ, Նա անսահման է: Հետևաբար Նա չի կարող անել կամ ասել այստեղ մի բան, ուրիշ տեղ՝ մեկ այլ բան: Նա միշտ նույնն է անում: Եթե Նա ավելի լավ ծրագիր ունենար, հենց սկզբից էլ կիրականացներ: Երբ Աստծուն կանչում են որևէ բանի համար, և Նա հռչակում է Իր վճիռը… եթե մի մեղավոր աղաղակել է Նրան, և Նա փրկել է մեղավորին իր հավատքի համաձայն, պետք է, որ Նա փրկի նաև հաջորդ մեղավորին և այսպես շարունակ: Նա միշտ նույն կերպ կգործի, այլապես սխալված կլիներ առաջին մեղավորին փրկելով:

101 Նույնը Նա անում է բժշկության վերաբերյալ: Նա արդեն ավարտել է այդ գործը: Միակ բանը, որ դուք պետք է ընդունեք, որ Նա առասպել չի: Նա ինչ-որ պատմական աստված չէ, Նա ներկա Աստված է, Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան, նույնն է նաև հենց հիմա: Հավատու՞մ եք, որ հիմա Նա այստեղ է: Կարո՞ղ եք զանազանել այդ:

102 Ես մեջքով կշրջվեմ այս դահլիճին: Հիմա ես կխնդրեմ Սուրբ Հոգուն հաստատել այն, ինչ ասել եմ այս երեկոյան, ավարտելով այս պատգամը, այսինքն՝ այն նշանները, որոնք Հիսուսը տվեց Սոդոմին, տրվելու են նաև այս սերնդին: «Ինչպես Սոդոմի օրերում եղավ, այնպես կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ»: Այսպիսով, դուք կարող եք զանազանել, թե որ Հոգին է ներկա այստեղ:

103 Էլ ովքե՞ր են հիվանդ, բայց աղոթքի թերթիկ չունեն: Մենք ուզում ենք կանչել աղոթքի թերթիկ ունեցողներին: Մենք աղոթելու ենք բոլորի համար:

104 Բայց ես ձեզ չեմ կարող ասել, թե ով է այս կամ այն մարդը: Դա Աստված գիտի: Նախ, ես ուզում եմ գտնել մեկին, որին Սուրբ Հոգին…

105 Այժմ, թող յուրաքանչյուրդ սկսի աղոթել և ասի. «Տեր, ողորմիր ինձ, և օգնության հասիր», և կտեսնեք, թե արդյոք Նա չի գործի Իր խոստումի համաձայն:

106 Ես ուշադիր եմ Նրա նշանի հայտնությանը: Ձեզանից քանի՞սը գիտեն, որ Հիսուսը Կրակի Սյունն էր, որ ուղեկցում էր Իսրայելի զավակներին: «Աստծուց եմ եկել և Աստծո մոտ եմ գնում»: Մի՞թե Նա չասաց այդ: Եվ երբ Պողոսը հանդիպեց Նրան Դամասկոսի ճանապարհին, ի՞նչ էր Նա. մի մեծ Լույս, Կրակի Սյուն: Նա նույնն է այսօր, Աստծո Սուրբ Հոգին: Հիսուսի Մարմինը Աստծո աջ կողմում է, երկնային գահին նստած, բայց Իր Հոգին երկրի վրա է, ավարտին է հասցնում Նրա գործը: Եվ այն Հոգին, որ Սոդոմ և Գոմոր գնացող Հրեշտակի մեջ էր, նույն Հոգին է, որ բնակվել է Հիսուս Քրիստոսի



24 Ամենավատ բանը աշխարհում այն է, երբ մեկը փորձում է կեղծիքով մի բանի նմանակել, իսկ նման բաներ ներկայումս շատ կան: Մենք այսօր մեղավոր ենք ոչ միայն այն հանցանքի համար, որի համար Պողոսը հանդիմանեց Կորնթոսի եկեղեցուն, այլ նաև, որ փորձում ենք անել մի բան, որ Տերն է պատվիրել առանց զանազանելու Տիրոջ Մարմինը, իսկ Տիրոջ Մարմինը հավատացյալների ամբողջությունն է: Բայց այսօր մենք բաներ ենք անում առանց զանազանելու Տիրոջ խոսքերից ոչ մեկը: Մենք պետք է կարողանայինք զանազանել մեր կատարած բոլոր բաները: Մեր կատարած բոլոր բաները պետք է չափվեն Աստծո Խոսքի չափանիշներով: Այն ամենը, ինչ քրիստոնյաներն ասում են և անում, պետք է չափվի Աստծո Խոսքով:

25 Այսօր մարդիկ շատ են փոխվել. հաճախ նրանք ավելի վստահում են եկեղեցու ասածներին, քան Խոսքին: Նրանք կարծում են, որ եկեղեցին Աստծո Խոսքից ավելի շատ իրավունքներ ունի որոշելու մեր ճաշակը: Ահա մի օրինակ: Եկեղեցին ասում է. «Հրաշքների օրերն անցել են», և շատ մարդիկ դրան հավատում են, որովհետև կարծում են, թե դրա վերաբերյալ եկեղեցին ավելի շատ գիտի, քան Սուրբ Հոգին, որ գրել է Խոսքը: Այսպիսով մենք ընդունակ չենք լինում զանազանելու Աստծո բաները:

26 Հիսուսն ասել է. *«Եթե մեկը վերստին չծնվի, չի կարող տեսնել Աստծո թագավորությունը»* կամ չի կարող հասկանալ այդ: Այլ կերպ ասած՝ դուք չեք կարող զանազանել Աստծո թագավորությունը, եթե վերստին չծնվեք:

27 Կան մարդիկ, որ ձեզ կասեն, որ Սուրբ Հոգու մկրտություն ստացածները ֆանատիկներ են: Նրանց կտան մի անաստված անվանում, որը սատանան տվել է եկեղեցուն: Նրանց կանվանեն «սուրբ թռչկոտողներ»: Ես քարոզել եմ աշխարհով մեկ, և երբեք չեմ տեսել այդ «ֆանատիկներից» մեկին: Այդ անունը սատանան է տվել կենդանի Աստծո Եկեղեցուն:

28 Երբեմն մարդիկ չեն կարողանում ճիշտ զանազանել: Նրանք վախենում են դրանից: Չգիտե՞ք, որ մեր Տիրոջը հրապարակավ մեղադրեցին խելագարության մեջ: Փարիսեցիներն ու դպիրներն ասում էին. «Այս մարդու խելքը գլխին չէ: Նա դև ունի, խելագար է»: Եվ եթե նրան խելագար անվանեցին, որքան ավելի Նրա աշակերտներին կանվանեն:

29 Պողոսն ասաց Ագրիպասին. «Ես իմ հայրերի Աստծուն պաշտում եմ այն ձևով, որ նրանք հերձված են անվանում»: Ես այնքան ուրախ եմ այս երեկո, որ կարող եմ ձեռքս մեկնել Նրան: Այն, ինչ

ժամանակակից եկեղեցին անվանում է «ֆանատիզմ», ես հենց այդպես եմ պաշտում իմ Աստծուն:

30 Նրանց հերետիկոս էին համարում, որովհետև չէին զանազանում Տիրոջ Մարմինը, որը կենդանի Աստծո եկեղեցին է:

31 Իսկ նրանք եկեղեցուն խելագար են համարում, որովհետև զանազանություն չունեն: Եթե մարդը վերստին ծնված է… եթե ինձ ասում եք, որ վերստին ծնված եք, բայց չեք հավատում, որ աստվածային բժշկությունը Աստծո խոստում է և Սուրբ Հոգու մկրտությունը այսօրվա ժողովրդի համար է, ես մի բան կարող եմ ասել. ձեր ծնունդը ճիշտ հոգուց չէ: Որովհետև Սուրբ Հոգին ասել է, որ այդ խոստումը ձեզ համար է, ձեր զավակների համար և բոլոր հեռավորների համար, որոնց մեր Տերը կկանչի: Դուք դա ընդունում եք ձեր իմաստությամբ: Մարդիկ դա ընդունում են ուրիշների խոսքերով, ոչ թե զանազանությամբ: Նրանք չեն կարողանում զանազանել ճիշտը սխալից:

32 Ես շատ եմ մտածում այդ ինտելեկտուալ հսկաների մասին. մենք նրանցից չենք: Աստծո ժողովուրդը երբեք բաղկացած չի եղել ինտելեկտուալ հսկաներից: Աստվածաշունչն ասում է, որ խավարի որդիները այս աշխարհում լուսո որդիներից ավելի խելացի են: Աստված Իր զավակներին համեմատել է ոչխարների հետ: Նրանք ո՛չ խորամանկ են, ո՛չ խելացի: Նա նրանց այսպես է պահում, որ կարողանա առաջնորդել նրանց: Եթե դուք փորձում եք ձեր սեփական մտածողությունը օգտագործել, դուք մերժում եք Աստծուն: Աստծո որդիները առաջնորդվում են Աստծո Հոգով: Բայց մենք ապրում ենք ինտելեկտուալիզմի օրերում:

33 Ինչպես կարդացել եք թերթերում, Նյու-Յորքում մի քանի ամիս առաջ դատավարություն է եղել: Երկու խոնարհ քարոզիչներ (համարյա ինձ նման՝ հազիվ կարդալ, գրել գիտեն) Տիրոջից առաջնորդվել են գնալու գինետների լքված թաղամասը, որտեղ նրանք մի շենք են գնել: Այնտեղ նրանք Ավետարանն էին քարոզում մեղքի մեջ ընկած իրենց եղբայրներին: Մի մեծ ձեռնարկություն եկավ գնելու բոլոր այդ տարածքները, և նրանցից բացի բոլորը վաճառեցին: Նրանք հայտնություն էին ստացել, որ Տերն ուզում է, որ այնտեղ մնան: Դրա համար նրանք չվաճառեցին իրենց սեփականությունը, և իշխանությունները նրանց դատի տվեցին:

34 Նրանք դիմեցին այդ ինտելեկտուալ հսկաներից մեկի՝ փաստաբան Գրինվուլի ծառայությանը: Նա երկու խեղճ քարոզիչներին անհարմար վիճակի մեջ դրեց: Նա այնքան կրթված ձևով խոսեց, որ այս երկու խեղճ քարոզիչները չգիտեին, թե ինչպես



ինտելեկտուալ դատողություններով: Մենք պետք է մտնենք Սուրբ Հոգով, որովհետև միայն այդ Հոգին ունի Սուրբ Հոգու եկեղեցին: Հոգու պտուղները՝ Քրիստոսի Կյանքը ձեր մեջ:

94 Այդ նույն Հրեշտակը ներկա է այստեղ: Նա եկել է վկայելու Սոդոմի և Գոմորի կործանման մասին:

95 Այժմ տեսնենք… Ձեզանից քանի՞սը աղոթքի թերթիկ ունեն: Բարձրացրեք ձեր ձեռքը: Քառասուն կամ հիսուն: Ովքե՞ր չունեն աղոթքի թերթիկ: Խնդրում եմ, բարձրացրեք ձեր ձեռքը: Երեք անգամ ավելի շատ: Լավ: Ես առաջնորդություն եմ զգում մի բան անելու: Սկսենք աղոթքի թերթիկ չունեցողներից: Աղոթքի թերթիկ ունեցողները… լավ, նրանք էլ կարող են գալ, բայց այս զանազանության ծառայությանը թող մասնակցեն աղոթքի թերթիկ չունեցողները: Մեկ անգամ էլ թող ձեռք բարձրացնեն նրանք, ովքեր հիվանդ են և աղոթքի թերթիկ չունեն, որպեսզի տեսնենք, թե ովքեր են: Լավ:

96 Այստեղ բաներ են բացահայտվելու: Հավատու՞մ եք, որ ձեզ ճշմարտությունն եմ ասել: Հավատու՞մ եք, որ ունեք հոգևոր զանազանություն, որը ձեզ հնարավորություն կտա իմանալու, որ սա ճշմարտությունն է: Պարտադիր չէ բարձրանալ մինչև այստեղ: Ես բժշկող չեմ: Ես ընդամենը մարդ եմ: Ես ձեր եղբայրն եմ: Քրիստոսն է ձեզ բժշկողը, եթե միայն կարողանաք ընդունել Նրա ներկայությունը այստեղ:

97 Ինչ վերաբերում է ձեր բժշկությանը, եթե Նա այստեղ կանգնած լիներ, հագած սրա նման մի կոստյում, Նա չէր կարող ձեզ բժշկել, որովհետև Նա արդեն այդ արել է: Նա միայն կապացուցեր, որ Ինքը Քրիստոսն է: Ինչպե՞ս կարող եք այդ իմանալ: Դուք Նրան կճանաչեք Հոգու պտուղներով, Իր Կյանքով:

98 Երբ Նա երկրի վրա էր, ինչպե՞ս ապացուցեց, որ Ինքն է Մեսիան: Երբ Նա հայտնվեց Պետրոսին և Նաթանայելին, ասաց նրանք, թե ովքեր են, որտեղից են… Դա այն նշանն էր, որ Նա տվել էր հրեաներին: Դա նրանց ժամանակաշրջանի վերջն էր: Կար մարդկանց մեկ ուրիշ խումբ, որ սպասում էին Նրա գալստին: Դրանք սամարացիներն էին, որոնք կիսով չափ հրեա, կիսով չափ հեթանոս էին: Նա բացահայտեց ջրհորի մոտ կանգնած կնոջ մեղքերը, և նա դա ընդունեց որպես Մեսիայի նշան:

99 Նա ասաց. «Գիտեմ, որ Մեսիան մեզ կասի բոլոր այդ բաները: Բայց դու ո՞վ ես»: Նա պատասխանեց. «Այդ ես եմ»:

100 Նա չգնաց հեթանոսների մոտ, այդպես չէ՞: Որովհետև հեթանոսները Նրան չէին սպասում: Քանի՞սդ եք հավատում, որ

Զանազանենք Տիրոջ Մարմինը և ձեռք մեկնենք մեղավորներին, նույնիսկ նրանց, որոնք ամենից ապականված են, որպեսզի նրանց բերենք հոտի մեջ: Սա է իմ խոնարհ աղոթքը:

90 Աստծո Հրեշտակը, որ գնաց Սոդոմ, եկավ և մեզ խոստումներ տվեց: Հիշեք, որ նույն Հրեշտակն է եկել: Բոլորը գիտեն, որ խոսքն Աստծո մասին է: Դա մարմին չէր, որովհետև մարմինը միայն հող է:

91 Վերջերս մի հովվի ասացի, որ այդ Հրեշտակն Աստված էր: Նա ինձ պատասխանեց. «Ո՛հ, Բրանհամ եղբայր, չէ՞ որ դուք չեք հավատում, որ այդ մարդն Աստված էր»: Ես պատասխանեցի: «Աստված էր: Աբրահամն այդ ասաց: Նա Նրան Էլոհիմ կոչեց: Դա Ամենակարող Աստվածն էր երկու հրեշտակների հետ»: Նա ինձ ասաց. «Ուրեմն դուք կարծում եք, որ Նա մարմնի մե՞ջ էր ապրում»: Ես նրան ասացի. «Դա այնքան պարզ է: Մենք կազմված ենք մոտ տասնվեց տարրերից՝ նավթ, տիեզերական լույս, կալցիում, պոտաշ և այլն: Աստված միայն պետք է վերցներ մի բուռ և … (Բրանհամ եղբայրը ուժեղ փչում է՝ ցույց տալու համար, թե ինչպես է Աստված փչում կյանքի շունչը. ծան. խմբ.): «Եկ, Գաբրիել»: «Եկ, Միքայել»: Եվս մեկ անգամ փչեց Ինքն Իր համար: Նա ասաց. «Ես տեսա, որ Սոդոմը հասունանալու վրա է… Իջնենք և տեսնենք: Ինքներս իջնենք: Աբրահամը քարոզել է: Մյուսները քարոզել են: Ինքներս տեսնենք»: Ու՞մ մոտ գնացին նրանք: Ընտրյալների: Նա մնաց և խոսեց Աբրահամի հետ: Աբրահամը Նրան Էլոհիմ կոչեց: Տեսեք այդ անվան սկիզբը՝ «Էլ»: Մի՞թե այդպես չէ: Տեր Եհովա Աստվածը: Աստված կարող է պարզապես փչել: Ես երջանիկ եմ, որ ճանաչում եմ այդպիսի Աստծու: Հնարավոր է, որ շուտով պարզապես հրաբխի մոխիր դառնամ, բայց Նա կխոսի, և ես կյանքի կվերադառնամ: Նա Աստված է:

92 Կինս վերջերս ասում էր. «Բիլլի, դու գրեթե ճաղատ ես»: Ես նրան ասացի. «Ես ոչ մի մազ չեմ կորցրել»: Նա հարցրեց. «Ուրեմն որտե՞ղ են դրանք»: Ես պատասխանեցի. «Ասա, թե որտեղ էին մինչև հայտնվելը, և ես կասեմ քեզ, թե որտեղ են նրանք սպասում իմ գալուն»: Դա ճիշտ է: Ձեր գլխից ոչ մի մազ չի պակասի: (Չձայնագրված հատված)…ամեն բանի վրա իշխանություն ունեցողը կասի. «Ուիլյամ Բրանհամ, եկ այստեղ»: Եվ ես կգամ Նրան նմանված լինելով: Ալելուիա: Այդ նույն Աստվածը Սուրբ Հոգով ներկա է այս երեկո մեր մեջ: Եվ Շեքինա փառքը Նրան բացահայտում է նույն ֆիզիկական նշաններով, որ Ինքն է ցույց տվել:

93 Եթե խաղողի որթը այսօր խաղող է տալիս, վաղն էլ կտա: Եթե խաղողի որթ է, միշտ էլ խաղող է տալու: Մենք երբեք չենք մտնի



պատասխանեն նրան: Նա ինտելեկտուալ հսկա էր, Նյու-Յորքի լավագույն իրավաբաններից մեկը: Նա այս երկու խեղճ մարդկանց այնպիսի խառնաշփոթության մեջ գցեց, որ նրանք չգիտեին, թե ինչ ասեն: Վերջապես նա հարվածեց սեղանին և ասաց. «Ի՞նչ ունեք ասելու ձեր պաշտպանության համար»:

35 Նրանցից մեկը վեր կացավ և բռնելով իր ընկերոջ ձեռքը՝ ասաց. «Պարոն, մենք միայն մի բան գիտենք. որ Տերը մեզ ասել է վերցնել այդ շենքը»: Բայց փաստաբան Գրինվոլը պատասխանեց. «Լռեք, այս գործի մեջ մեզ Տերը պետք չէ»: Մոտ երկու շաբաթ անց մի ինքնաթիռ փորձեց անցնել կամրջի տակով, բայց սուզվեց սառուցյալ ջրերում, և ահա փաստաբան Գրինվոլը մահամերձ պայքարում էր: Հետաքրքիր է, թե արդյո՞ք այդ պահին նրան պետք չէր Աստված:

36 Ի՞նչ էր կատարվել: Նա չէր զանազանել Տիրոջ Մարմինը. այս երկու քարոզիչները Սուրբ Հոգով օծված էին և կատարում էին Աստծո կամքը: Մեզ պետք չէ լինել ինտելեկտուալ հսկաներ: Մենք պետք է լինենք Տիրոջ խոնարհ ծառաները և զանազանենք Տիրոջ Մարմինը: Իսկ նրա ողջ խելացիությունը, խորագիտությունը, կրթվածությունը… Դուք գիտեք, թե ինչ է ասում Աստվածաշունչը: «Ավելի լավ կլիներ, եթե ձեր վզից մի աղացքար կախեին և ծովի անդունդը նետեին, քան թե չարիք անեիք իմ օծյալներից մեկին»: Ենթադրում եմ, որ նա բավական ժամանակ ուներ Տիրոջը կանչելու համար, բայց նա չզանազանեց Տիրոջ Մարմինը:

37 Երբեմն ես ինձ հարցնում եմ, թե մենք՝ ինտելեկտուալ ամերիկացիները, ունենք արդյոք բավական զանազանություն, որ կարողանանք չարը բարուց տարբերել: Անչափահասների գործերով դատերը ցույց են տալիս, որ մենք չունենք զանազանություն մեր երեխաների վերաբերյալ, և դրա վերաբերյալ հոգեբանից ճիշտ պատասխան են ստացել: Ահա մի օրինակ: Որդին գնում է հոր մոտ, ոտքերով զարկում հատակին, գլուխը թափահարում և գոռում. «Հայրիկ, ինձ քո ասածը չի հետաքրքրում: Ես ուզում եմ այս խաղալիքը»: (Սա տիպիկ ամերիկյան տեսարան է):

38 Այնժամ հայրը պատասխանում է. «Շատ լավ, որդիս, ես կգնեմ այն»: Դուք կարող էիք հարցնել այդ հորը. «Ինչու՞ արեցիք այդ»: «Ո՛հ, որովհետև այնքան շատ եմ սիրում նրան»:

39 Բայց հիշեք, սիրելի հայրիկ, որ այդ որդին մի օր չափահաս է դառնալու, ամուսնանալու է և ընտանիք է ունենալու: Թող Աստված օգնական լինի այն կնոջը, որը կապրի այդպիսի մարդու հետ, որը նման կերպով է դաստիարակվել և միշտ իր ուզածը ստացել է: Նա չարը բարուց զանազանել չգիտի: Սա սեր չէ, սա մաքուր

տգիտություն է: Աստվածաշունչը իրավացի է. «Գավազանը խնայողը ատում է իր որդուն»:

40 Փոքրիկ Ֆաննին գալիս է մոր մոտ, որ թույլտվություն խնդրի ռոք-ն-ռոլի համերգին գնալու համար: Մայրը նրան արգելում է: «Մայրիկ, դու դաժան ես իմ հանդեպ»: Իհարկե, դուք սիրում եք Ֆաննիին և թույլ եք տալիս, որ գնա: Նա կգնա այդ խուլիգանների խմբի հետ… հետո կվերադառնա և ծամածռելով իր ներկած շուրթերը՝ ձեզ սուտ կասի: Կասի, որ դրա մեջ ոչ մի վատ բան չկա: Թող Աստված ողորմություն անի այն մարդուն, որը նման կնոջ հետ կամուսնանա: Զանազանել չարը բարուց: Մենք չենք կարողանում ինքներս մեզ համար էլ զանազանություն անել:

41 Երբեմն հարցնում եմ, թե արդյոք կարող ենք բարին չարից զանազանել մեր մարմնի վերաբերյալ հարցերում, առավել ևս Տիրոջ Մարմնի: Մենք բարին չարից չենք զանազանում մեր մարմինների համար: Օրեցօր, շաբաթ առ շաբաթ, ամիս առ ամիս, տարեցտարի գիտնականներն աշխատում են փորձասենյակներում, մեծ ցուցանակներ են պատրաստում՝ մարդկանց զգուշացնելու համար քաղցկեղի վերաբերյալ: Մոտ երկու հարյուր յոթանասուն հազար ամերիկացի այս տարի կմեռնեն ծխելու պատճառով, իսկ դուք շարունակում եք ծխել: Եթե մենք զանազանություն չունենք մեր սեփական մարմնի վերաբերյալ, ինչպես կարող ենք զանազանել Սուրբ Հոգին Տիրոջ Մարմնի մեջ:

42 Վերջերս կարդացի՞ք այն հոդվածը, որտեղ այդ գիտնականը տվել է իր հետազոտությունների արդյունքը: Նա ասել է. «Ծխախոտը ոչ միայն ձեզ քաղցկեղ կտա, այլև հիսուն տոկոսով ավելի շատ հավանականություն կա նաև ուրիշ հիվանդություններ ստանալու»: Իսկ դուք շարունակում եք ծխել:

43 Վերջերս երբ ծխելու վերաբերյալ շատ խիստ խոսեցի, մի կին (մոլի ծխող) մոտեցավ ինձ և գրպանս մի թուղթ դնելով՝ ասաց. «Կարդացեք սա տանը»: Ես ասացի. «Շնորհակալություն, հենց հիմա կկարդամ», և սկսեցի կարդալ: Նա ինձ ասաց. «Քաղաքավարի չէ, երբ քարոզիչը ամբիոնի մոտից խոսում է ծխելու դեմ: Դա ձեզ չի վերաբերում»: Ես պատասխանեցի. «Իմ պարտքն է խոսել այն ամենի դեմ, ինչ վատ է»: Թող Աստված ողորմություն անի այն քարոզիչին, որը Սուրբ Հոգով չի կարողանում զանազանել եկեղեցու կարիքները: Աստված ասել է. «Այս մարմինը Տիրոջ տաճարն է: Եթե դուք այն ապականեք, ես ձեզ կկործանեմ»: Մենք պետք է քարոզենք ընդդեմ այդ բաների: Դժբախտությունն այն է, որ չափազանց շատ քարոզիչներ կան, որոնք իրենք էլ ծխում են: Դա է խանգարում:



ենք արել: Հոգևոր զանազանությունը…. Զզանազանել Տիրոջ Մարմինը…

86 Աղոթենք… եթե այս ձեռքերը պետք է գործի մեջ լինեն (և դուք գիտեք, որ պետք է լինեն), ուրեմն չե՞ք ուզում դրանք բարձրացնել Աստծուն և Նրան խնդրել, որ դրանք սրբացնի Իր ծառայության համար, երբ աղոթում ենք: Բարձրացրեք ձեր ձեռքերը:

87 Տե՛ր, նայիր բոլոր այս ձեռքերին: Նայիր նաև իմ ձեռքերին: Ես ուզում եմ գալ ծեր զինվորի՝ սպիներով ծածկված ձեռքերով: Ես չեմ ուզում դատարկաձեռն գալ: Ես ուզում եմ քարոզել մինչև իմ մահվան օրը: Ես ուզում եմ աղաչել, ծոմ պահել և աղոթել, որովհետև գիտեմ, որ գիշերվա ստվերներն իջնում են, և ժամանակը մոտ է: Տե՛ր, բացիր իմ աչքերը, որ նորից տեսնեմ Քո գալստյան նշանները: Այս երեկո այրիր այս մարդկանց սրտերը Քո խոստացած հրաշալիքներով:

88 Երբ տեսնում ենք, որ կանխասված բաները իրականանում են աշխարհում, և մեղավոր մարդը աղաղակում է. «Նա մաքրելու է Իր տաճարը» … Մենք գիտակցում ենք, որ ունենք բոլոր անհրաժեշտ ռումբերը, որ դրանք իրականանան: Անհրաժեշտ է, որ միայն մի ֆանատիկ սեղմի կոճակը: Բայց Դու դեռևս հեղում ես Քո գթությունը, մինչև որ Քո եկեղեցին պատրաստ լինի: Տեր, այս երեկո պատրաստիր մեզ: Վերցրու մեր սրտերը Քո ծառայության համար: Ցույց տուր մեզ Քո ներկայությունը, որովհետև մենք հավատում ենք, որ Դու հարություն ես առել մեռելներից, և մեր հոգին զանազանում է, որ Դու նույն Հիսուսն ես երեկ, այսօր և հավիտյան: Դու այստեղ ներկա ես Սուրբ Հոգով, որ գործես Քո եկեղեցու միջոցով, բժշկես և փրկես: Լսիր մեր աղոթքները, ո՛վ Տեր, մինչ ես Քեզ եմ հանձնում այս մարդկանց և ինքս ինձ Հիսուսի՝ Աստծո Որդու անունով: Ամեն:

89 Ո՛հ, եթե չլիներ Նրա գթությունը, Նրա բարությունը: Ես հոգնածություն եմ զգում: Բայց դա իմ սրտի վրա է, պետք է ասեմ: Հուսով եմ, որ ես չեմ վիրավորել իմ մեթոդական, մկրտական, հոգեգալստական բարեկամներին: Իսկ եթե վիրավորել եմ, ես չէի ուզում այդ: Ես ուզում եմ ձեզ արթնացնել, սթափեցնել: Մենք հասնում ենք վերջին: Չունենալով Տիրոջ Մարմնի զանազանությունը, մենք բաժանվում ենք և հավատքի մեջ չենք մնում: Եթե կա մի ժամանակ, որում մենք կարիք ունենք ձեզանից յուրաքանչյուրին, ապա դա հիմա է: Դուք իմ կարիքն ունեք, ես ձեր կարիքն ունեմ: Աստված ունի մեր բոլորի կարիքը: Միացնենք մեր սրտերը և ջանքերը: Չմտածենք, որ եթե ուխտյալներ ենք, «Սրբության ուխտավորներ», կաթոլիկներ, երիցականներ, հոգեգալստականներ և այլն… թող մենք լինենք քրիստոնյաներ:

երկրպագելով, աղաչելով, ամեն հնարավորն անելով, որ մեղավորներին ապաշխարության բերի:

79 Անպայման: Եթե դա Աստծուց է… Դուք պետք է անեք ողջ սրտով, եթե զանազանություն ունեք: Գործե՛ք: Մի բավարարվեք միայն ասելով. «Այո, ես հավատում եմ այդ բաներին: Դա ճշմարտություն է: Շատ լավ է: Ամեն» և գնալ տուն: Գործի անցեք: Դուք զանազանություն ունեք: Աշխատեք, քանի դեռ ցերեկ է: Որովհետև գիշեր է գալու, երբ ոչ ոք չի կարողանա աշխատել: Աշխատեք, քանի դեռ դռները բաց են: Աշխատեք, քանի դեռ կարող ենք այսպիսի հավաքույթներ ունենալ: Բերեք ձեր սիրելիներին: Բերեք նրանց Ավետարանին: Բերեք ձեր բարեկամներին, հարևաններին: Աստված մահացել է այդ մարդկանց համար, և մենք պետք է շահագրգռված լինենք աշխատելու, մինչև մեր ձեռքերն արյունոտվեն: Մենք դատարկաձեռն կմտնենք, եթե չանենք այդ:

80 Ինչպես այն փոքրիկ աղջիկը, որ վերջերս Քենթուքիի բլուրների վրա մեռավ: Մոտ ութ երեխա կար այդ ընտանիքում: Նրանք մեկը մյուսից ծույլ էին: Նրանք չէին ուզում որևէ բան անել, չնայած, որ նրանց մայրը պառկած էր՝ մեռնելով թոքախտից: Եվ այդ փոքրիկ աղջիկը, որը տասներկու տարեկան էր, միայնակ էր զբաղվում խոհանոցով, տնային գործերով և լվացքով, խնամում էր մորը, մինչդեռ մյուսները խաղում էին, լողում և թափառում այստեղ-այնտեղ:

81 Նրանց մայրը մահացավ, իսկ փոքրիկ աղջիկը ստիպված էր այդպես էլ շարունակել, որովհետև ոչ ոք չէր ուզում աշխատել: Նա աշխատեց, աշխատեց այնքան, որ ինքն էլ հիվանդացավ: Զրկանքները, աշխատանքը ազդեցին նրա օրգանիզմի վրա: Շուտով նա մահամերձ էր:

82 Կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհին եկավ նրան տեսնելու և հարցրեց. «Դու քրիստոնյա՞ ես:

Երեխան պատասխանեց.

---- Այո:

---- Ո՞ր հարանվանությանն ես պատկանում:

---- Ես որևէ հարանվանության չեմ պատկանում:

83 ---- Ուրեմն ի՞նչ կանես, երբ հանդիպես Հիսուսին: Ի՞նչ ցույց կտաս նրան, որ Նա իմանա, թե որ եկեղեցուն ես պատկանել:

84 ---- Ես Նրան ցույց կտամ իմ ձեռքերը: Նա կհասկանա:

85 Դե ինչ, ես կարծում եմ, որ բոլոր այդ հավաքույթներից հետո, Նա մեր ձեռքերին է նայելու: Նա կնայի մեր ձեռքերին, որ իմանա, թե ինչ



Նրանք չեն համարձակվում այդ մասին խոսել եկեղեցում, որովհետև իրենք էլ են մեղավոր:

44 Ճիշտ զանազանել, ճիշտ մատակարարել: Վիսկին, ալկոհոլը… Նրանք ասում են. «Ինչու՞ է դա վատ»: Դուք դա տեսնում եք հեռուստացույցի էկրանին, գովազդային ցուցատախտակների վրա: Ամսագրերում տեսնում եք գեղեցիկ, երիտասարդ կանանց, որոնք գարեջուր են խմում: Դուք տեսնում եք սկիզբը: Տեսեք, թե հետո ինչ են դառնում: Դա թունավորում է նրանց հոգին: Մտավոր խանգարումների սարսափելի աճ կա: Դա անբարոյականություն է ստեղծում երիտասարդների մեջ: Եկեղեցիներն էլ են քարոզում և ասում. «Չափավոր խմեք»: Դուք գիտեք, որ դա ճիշտ է: Նրանք ասում են երիտասարդներին և ծնողներին. «Խմեցրեք ձեր երեխաներին: Նրանք ամեն դեպքում կխմեն: Ուրեմն սովորեցրեք նրանց չափավոր խմել»: Աստվածաշունչը դատապարտում է այդ: Դա ճիշտ չէ: Թող Աստված ողորմություն անի այն մարդուն կամ եկեղեցուն, որը սրանից ավելի զանազանություն չունի: Նրանք չգիտեն բարին չարից զանազանել:

45 Ո՛հ, մենք սարսափելի օրերում ենք ապրում: Զանազանել Տիրոջ Մարմինը: Մեր եկեղեցիներում, մեր համայնքներում ամոթ է տեսնել, թե ինչպես են կանայք իրենց պահում: Շատերը անբարո հագուստներ են հագնում: Այդ կարճատաբատները: Դա մեղք է: Մի կին ինձ ասաց (ինչպես նրանցից շատերը). «Բիլլի, դուք պետք է դադարեք այդ մասին խոսել»: Ո՛չ, եթե նույնիսկ ստիպված լինեմ պատերի հետ խոսել, ես կշարունակեմ ճշմարտությունն ասել: Անպայմա՛ն: Դա վատ է, դա մեղք է: Մի կին ինձ ասաց. «Ես կարճատաբատ չեմ հագնում, միայն երկար տաբատներ»: Ես նրան պատասխանեցի. «Ավելի վատ: Աստվածաշունչն ասում է, որ Աստծո առաջ գարշելի է, երբ կինը տղամարդու հագուստ է հագնում»: Դա ճշմարտությունն է: Բայց պատճառաբանություն են գտնում. «Ուրիշ հագուստ չենք կարողանում ճարել»: Բայց դեռևս կարի մեքենաներ արտադրում են, և կտորեղեն վաճառում են:

46 Այդպես հագնվող կինը դատաստանի օրը շնության մեջ կմեղադրվի: Հնարավոր է, որ դուք շուշանի պես մաքուր եք ձեր ամուսնու կամ փեսացուի առջև, բայց Հիսուսն ասում է. *«Ամեն ոք, ով մի կնոջ նայում է նրան ցանկալու համար, իր սրտում նրա հետ արդեն իսկ շնանում է»*: Ուրեմն, հնարավոր է, որ իրականում մեղք գործած չլինեք, բայց եթե այդ տեսքով եք ներկայանում տղամարդուն, նա կմեղադրվի շնության մեջ, և մեղավորը դուք կլինեք: Եվ եկեղեցին թույլ է տալիս դա: Նա չի զանազանում Տիրոջ Մարմինը: Ինչպիսի՜ խղճալի վիճակ: Նրանք կտրում են իրենց

մազերը: Աստվածաշունչն ասում է, որ եթե կինը կտրում է մազերը, ամուսինը իրավունք ունի նրանից բաժանվելու, որովհետև նա անհավատարիմ է: Աստվածաշունչն ասում է, որ նա անպատվում է իր գլուխը: Մի՞թե այդպես չէ: Իսկ նրա գլուխը ամուսինն է:

47 Գիտեմ, որ դա խիստ է, բայց մենք զանազանության կարիք ունենք: Մենք պետք է Խոսքով զանազանենք: Խոսքն է իրավացի: Վերցրեք Խոսքը: Աստծո Խոսքը միշտ իրավացի է:

48 Մենք չենք կարող զանազանել մարդկանց խոսքերով, ինտելեկտուալների ու հոգեբանների խոսքերով: Մենք պետք է հիմնվենք Աստծո Խոսքի վրա: *«Մարդ ոչ միայն հացով է ապրում, այլ այն ամեն խոսքով, որ Աստծո բերանից է դուրս գալիս»*: «Տիրոջ Մարմինը չզանազանելու պատճառով շատերը տկար և հիվանդ են, շատերն էլ ննջում են», հոգևորապես մեռած են: Եգիպտոսի վերջին պատուհասը եղավ մահը: Վերջին պատուհասը, որ զարկել է եկեղեցուն, հոգևոր մահն է: Այսօր մենք կարիք ունենք հոգևոր արթնության, որ զանազանություն ստանանք:

49 Յնարավոր է, որ նրանք այդ բաներն անում են լավ մտադրություններով: Յարավում մի բժիշկ իր հիվանդին ծծմբական թթու տվեց, որից նա մահացավ: Նա լավ մտադրություններ ուներ: Նա կարծում էր, թե ինքը ճիշտ է վարվում, բայց նրա զանազանությունը սխալ էր: Նա չկարողացավ դեղը թույնից զանազանել:

50 Մի փոքրիկ աղջիկ փողոցում մի թրջված և սառած փիսիկ գտավ: Նրան վերցրեց և դրեց փուռը, որ չորացնի: Նրա մտադրությունները լավն էին, բայց զանազանություն չուներ: Եթե մենք էլ զգույշ չլինենք, մենք էլ «կխորովենք փիսիկին» մեր ինտելեկտուալ զանազանությամբ:

51 Կոմունիզմը գրոհում է մեզ վրա: Աշխարհը գրոհում է մեզ վրա: Մեր եկեղեցիները մասնատվում են: Մարդիկ բաժանվում են, և թվում է, թե այլևս հավատք չունեն: Նրանք մանրուքների հետևից են ընկնում փոքր, աննշան ուսմունքների վերաբերյալ: Մենք պետք է հավաքվեինք միասին, աղոթեինք, ծոմ պահեինք, կանչեինք, մինչև Աստված մեզ ուղարկեր Սուրբ Յոգին` հոգևոր զանազանություն ունենալու համար:

52 Մենք ապրում ենք վերջին ժամվա մեջ: Մենք Տիրոջ գալստի ստվերի տակ ենք, բայց եկեղեցին չի կարողանում զանազանել այդ: Շատ ավելի ուշ է, քան կարծում ենք:

53 Եթե Պողոսը հարություն առներ այս երեկո հենց այս` Միդլթաունի քաղաքում, ինչպիսի կրակ կլիներ: Արևածագից առաջ նրան բանտ կնետեին որպես խելագարի և վտանգավոր մարդու: Սուրբ Յոգով



74 Նրանք ինձ ասացին. «Դու այդ ֆանատիկներից կդառնաս, Բիլլի: Ոչ ոք նման բաներ չի լսի»: Ես ասացի. «Եթե Աստված է ինձ ուղարկել, Նա Իր Աստվածաշնչում խոստացել է, որ կբերի մեկին, որ ինձ կլսի»: Դա ճիշտ է:

75 Զանազանենք Տիրոջ Մարմինը: Զանազանենք այն ժամանակը, որում ապրում ենք: Մենք հոգևորապես կմեռնենք, եթե չանենք այդ: Եվ եթե այս բաները ճիշտ են, ուրեմն Սուրբ Յոգին մեզ հետ է, և մենք ստացել ենք Նրա գալստյան վերջին նշանը, Նրա գալուց առաջ: Յիշեք, որ այդ ամենը կատարվեց այն բանից առաջ, երբ Սոդոմը կրակով ոչնչացավ, Սոդոմի այրվելու մի քանի ժամ առաջ:

76 Կարծում եմ, որ այսօր… Ձեզանից շատերը լսել են, թե Խրուշչևն ինչ է ասել ամերիկացիներին: Դուք կարդացել եք այդ մասին թերթերում: Ահա նրա հայտարարությունը: Դուք կարող եք դա հասկանալ ձեր բնական զանազանությամբ: «Եթե Աստված կա, Նա ավլելու է տաճարը, մաքրելու է այն` վռնդելով ձեզ բոլորիդ` կապիտալիստ դրամափոխներիդ»: Յասկանու՞մ եք, թե դա ինչ է նշանակում: Եվ նա իրավացի է: Նրա նման հեթանոսը, դևը, ինքնակոչը պետք է այս սպառնալիքներն ասի: Եվ նա իրավացի է: Չնայած դրան` նրանք շարունակում են քնած մնալ` մեղք են գործում, խմում են, անտեսելով այդ ամենը, որովհետև չունեն Տիրոջ Մարմնի հոգևոր զանազանությունը: Ի՜նչ օրերում ենք ապրում:

77 Սիրելի եղբայրներ և քույրեր, բոլոր իմ սիրելիներ… ես չեմ ուզում աչառություն անել: Ես պարզապես ասում եմ ձեզ ճշմարտությունը: Ես պարզապես պատասխանատու եմ Աստվածաշնչի առջև և ասում եմ ձեզ. եթե հավատում եք, որ ես Նրա մարգարեն ու ծառան եմ, ուրեմն հավատացեք, որ ձեզ ճշմարտությունն եմ ասում: Ժամանակը մոտ է: Թե ինչքան մոտ է, ես այդ չգիտեմ, ոչ ոք այդ չգիտի, բայց մի բան գիտեմ. մենք Նրա գալստյան ստվերի տակ ենք ապրում:

78 Չե՞ք լսում այդ սպառնալիքները: Չե՞ք տեսնում, թե նրանք ինչ են անում: Ողջ ազգը փորձում է դրանք կանխելու համար խմել, ծիծաղել: Դուք չպետք է այդ անեք: Եթե անեք այդ, ուրեմն ուզում եք խուսափել Աստծուց եկող զանազանությունը ստանալուց, որը կարող էր ձեզ ցույց տալ, թե ձեռքը ինչ է գրել պատի վրա: Մենք գիտենք, որ մենք ա՛յդ ժամանակներում ենք ապրում: Դուք կարող եք այդ մտքերից ազատվել կատակների, հոլիվուդյան զվարճանքների, հեռուստատեսության և նման այն բաների օգնությամբ, եթե ուզում եք, բայց եթե մեկը իսկապես վերստին ծնված է և Սուրբ Յոգու զանազանությունն է ստացել, կգտնի իր տեղը եկեղեցում,

խորհրդանշում էր հոգևոր եկեղեցին: Իսկ Ղովտը խորհրդանշում էր մարմնավոր կամ բնական եկեղեցին: Նա ապրում էր Սոդոմում, մեղավորների շրջապատում, մինչդեռ նրա մեջ կար արդարության օրենքը, բայց նա փոխզիջման գնաց մեղքի հետ: Եվ հիշեք, որ այս երկու ինտելեկտուալ քարոզիչները գնացին Սոդոմում քարոզելու: Նրանք հրաշքներ չգործեցին, բայց կուրացրին մարդկանց: Խաչի քարոզչությունը կուրացնում է անհավատներին: Այդ են արել Բիլլի Գրեհեմի և մյուսների հավաքույթները: Նրանք դրանից ավելի վատն են դարձել:

70 Դուք բոլորդ լսել եք, որ մի քանի շաբաթ առաջ, երբ նա Անգլիայում էր, ստիպված եղավ իր կնոջ հետ դուրս գալ այն զբոսայգուց, որտեղ պետք է մեծ հավաքույթ անցկացներ, որովհետև այնտեղ տղամարդիկ և կանայք հրապարակավ սեռական հարաբերություններ էին ունենում, հենց այնտեղ, որտեղ ինքը պետք է հավաքույթ անցկացներ:

71 Ինտելեկտուալ քարոզները չէ, որ օգուտ են բերելու: Պետք էր իջեցնել Աստծո բարկությունը և երկնքից սրբազան կրակը՝ աշխարհի մեջ փոփոխություն բերելու համար, բայց դա չի կատարվի: Մարդիկ սպասում են ինչ-որ մեծ բանի գալուստը, բայց ահա արդեն վերջն է այն բանի, ինչ արդեն եղել է: Վերջին նշաններն են տրվել հեթանոսների եկեղեցուն: Հրեաները կունենան այն նշանները եկեղեցու հափշտակությունից հետո, բայց մենք արդեն հասել ենք հեթանոսների ժամանակաշրջանի վերջին:

72 Վերջացնելուց առաջ կուզենայի ասել սա. ուշադրություն դարձրե՞լ եք, թե ով մնաց հոգևոր եկեղեցու հետ խոսելու համար: Նա մեջքով շրջված էր դեպի վրանը, և այդ Անծանոթը հարցրեց. «Որտե՞ղ է Սառան՝ քո կինը»: Աբրահամը պատասխանեց. «Նա վրանում է»: Հրեշտակը նրան ասաց. «Ես կգամ քեզ տեսնելու, Աբրահամ, քեզ տրված խոստումի համաձայն»: Եվ Սառան վրանում սկսեց ծիծաղել: Այնժամ Հրեշտակը հարցրեց. «Սառան ինչու՞ ծիծաղեց»: Հիսուսն ասել է. «Ինչպես եղել է Սոդոմի օրերում, այնպես էլ կլինի մարդու Որդու հայտնվելու ժամանակ»:

73 Այժմ հասկանու՞մ եք: Հասկանու՞մ եք, թե ինչու այսպիսի ծառայությունը կարող է հասնել միայն Լրիվ Ավետարանի մարդկանց: Տեսնու՞մ եք, թե դա մեզ ուր է տանում: Ես իմ հոգևոր կրթությունը ստացել եմ մկրտական եկեղեցում, ձեռնադրվել եմ որպես մկրտական քարոզիչ միսիոներ, բայց երբ ինչ-որ բան դիպավ իմ սրտին, ես զանազանեցի, որ դա Աստծո Խոսքն էր: Նա բացահայտեց այդ:



լցված այդ մարդը՝ տեսնելով, թե ինչ է կատարվում և իմանալով, որ ժամանակը մոտ է… այնպիսի արթնություն կլիներ, որ կգնային բանտում նրան լսելու: Դա ճիշտ է:

54 Բայց Հիսուսն ասել է, որ վերջին ժամանակներում մեծ նշաններ ու հրաշքներ են լինելու երկրի վրա: Եվ գիտեք, որ եկեղեցին այնպես է մեռել իր աստվածաբանության, ամեն տեսակ ուսմունքների, ծրագրերի և ուսուցման համակարգերի մեջ, որ չի կարողանում զանազանել այդ բաները:

55 Մի՞թե Հիսուսը չասաց եկեղեցուն. «Երկնքի երեսը հասկանալը գիտեք, բայց ժամանակների նշանները չեք կարող զանազանել:Եթե Ինձ ճանաչեիք, իմ օրն էլ կճանաչեիք»: Եկեղեցու ազատագրման ժամը մոտ է, բայց նրանք չեն կարողանում զանազանել այդ:

56 Ինչ-որ բան այնպես չէ: Ես չեմ խոսում եկեղեցու ամբողջության մասին, բոլոր նրանց մասին, ովքեր քրիստոնյա են համարվում: Աստված իրոք կարող է հոգևոր իրադարձություններ սկսել. մարդիկ փրկվում են և Սուրբ Հոգով լցվում: Բայց կան հազարավոր մարդիկ, որոնք քրիստոնյա են կոչվում, հեռանում են այդ բաներից և ասում են. «Սրանք ֆանատիկներ են»: Ուրեմն, դուք հոգևոր զանազանություն չունեք, որովհետև այն ամենը, ինչ Սուրբ Հոգին կատարում է, գրված է Աստվածաշնչում: Ամեն ինչ քննեք Սուրբ Գրքով:

57 Այսպես կարող ենք իմանալ, թե արդյոք մեր զանազանությունը ճիշտ է: Եթե Աստվածաշունչն ասում է, որ «Հիսուսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան», ուրեմն ես հավատում եմ: Եթե Աստվածաշունչը… եթե Հիսուսը ասում է. «Դուք էլ կանեք իմ արած գործերը», ուրեմն ես հավատում եմ: Եվ եթե Աստվածաշունչն ասում է, որ Սուրբ Հոգին տրվում է ամեն սերունդի, բոլոր մարդկանց, բոլոր նրանց, ում մեր Տեր Աստվածը կկանչի, ես չեմ հավատում, որ ձեռքսեղմումը կարող է դրան փոխարինել: Ես հավատում եմ, որ միշտ նույն Սուրբ Հոգին է գործում նույն նշանները և նույն հրաշքները:

58 Սուրբ Հոգին ունենալու լավագույն ապացույցն այն փաստն է, որ մեր հոգին վկայում է Աստծո Խոսքը: Եթե մենք մեզ քրիստոնյա ենք համարում և պնդում ենք, որ լցված ենք Հոգով, որը Սուրբ Հոգու մկրտությամբ հեղվել է բոլոր ժամանակների հավատացյալների վրա, բայց մեր հոգին մեզ ասում է, որ դա ուրիշ ժամանակաշրջանի համար էր, ուրեմն մենք մոլորության մեջ ենք: Դա այդպես է:

59 Երբ Աստվածաշունչն ասում է, որ Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան, բայց մեր հոգին ասում է. «Ոչ, Նա

մահացել, հեռացել է», ուրեմն ինչ-որ բան այնպես չէ: Հիսուսն ասել է. «Դուք էլ կանեք իմ արած գործերը: Ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը»: Եթե մեր հոգին մերժում է այդ, ուրեմն մենք Սուրբ Հոգին չունենք: Որովհետև Սուրբ Հոգին «ամեն» է ասում այն ամեն խոսքին, որ Նա գրել է:

60 Ինտելեկտուալ գիտությունը ձեզ կհեռացնի դրանից, բայց Սուրբ Հոգին «ամեն» կասի Իր սեփական Խոսքին: Նա անկասկած կանի այդ: Եվ Նա փնտրում է, փորձում է գտնել մեկին, որի մեջ կկարողանա Ինքը բնակվել: Նա մեծ փափագ ունի այդպիսի մեկին գտնելու:

61 Մի՛ կարծեք, որ դուք կարող եք սպառել Նրա բարությունը: Կարո՞ղ եք պատկերացնել, որ մեկ սանտիմետր երկարություն ունեցող ձկնիկը Խաղաղ օվկիանոսում ասեր. «Պետք չէ այդքան ջուր խմեմ, կպակասի»: Անմտություն կլիներ կարծել, թե դուք կարող եք սպառել Աստծո բարությունը: Շատ խնդրեք, որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի: Հավատացեք Աստծուն այն ամենի համար, որ Նա խոստացել է: Դրանք ձեզ համար են:

62 Հին Կտակարանի մարգարեները՝ Դանիելը և մյուսները, ասել են. «Վերջին ժամանակներում Աստծուն ճանաչողները մեծ գործեր կանեն»: Ինչպիսի՜ խոստում: Երբ ինտելեկտուալները տեսնում են այդ գործերը, ասում են. «Սա հոգեբանություն է, հեռազգայություն, սատանայի գործ է», բայց Սուրբ Հոգին կասի. «Ամեն, սա ճշմարտությունն է»: Ճշմարիտ զանազանություն: Նրանք խոստացել են: Նա խոստացել է այդ: Նա ասել է. «Դուք էլ կանեք իմ արած գործերը: Ավելի մեծ գործեր կանեք, որովհետև Հոր մոտ եմ գնում»:

63 Պողոսը Սուրբ Հոգով հայտնել է, որ վերջին օրերում եկեղեցին անկում է ապրելու, միլիոնավորները ընկնելու են: «Այս իմացիր, որ վերջին օրերում չար ժամանակներ կգան, որովհետև մարդիկ կլինեն ինքնասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյող, ծնողներին անհնազանդ, ապերախտ, անմաքուր, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, գոռոզ, ավելի հաճոյասեր, քան թե աստվածասեր…»: Նրանք ճշմարիտ զանազանություն չեն ունենա:

64 Ո՛հ,--- կասեք դուք,--- խոսքը կոմունիստների մասին է: Ո՛չ, խոսքը կարծեցյալ քրիստոնյաների մասին է: Նայեք հաջորդ համարը. «…Դրանք աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա զորությունն ուրացել են…»: Նրանք հոգևոր զանազանություն չունեն: Եթե դուք հոգևոր զանազանություն ունեք, և Սուրբ Հոգին ձեր մեջ է, ուրեմն դուք ունեք այն հոգևոր զանազանությունը, որը «ամեն» է



ասում Աստծո ամեն խոսքին: Պողոսն է այդ ասել:

65 Մենք հասել ենք այնտեղ. եթե նայենք, կկարողանանք տեսնել: Մենք տեսնում ենք, որ ամենուրեք այդ բաների մասին ենք խոսում, և ի՞նչ ենք անում: Դա պետք է մեզ միաբաներ: Աստվածաշունչն ասում է. «Հավաքվելը չթողնենք, և այնքան ավելի, որքան տեսնում ենք, որ օրը մոտեցել է»: Պետք է արթնություն լինի արթնության հետևից, պետք է Աստծո փառքի հրավառություն լինի ամեն եկեղեցում, բոլոր վայրերում: Մի մեծ հավաքույթ, ուր բոլոր եկեղեցիները հավաքվում են մեկ սրտով, մեկ մտքով, մոռանալով իրենց մարդկային աստվածաբանությունը, աղաղակում են Աստծուն՝ ստանալու համար հոգևոր զորություն և հոգևոր արթնություն: Մենք դրա՛ կարիքն ունենք:

66 Կարող եմ նաև ասել սա. Հիսուսը մեզ տվել է մի օր (ինչպես ասացի երեկ երեկոյան), որ ճանաչենք ժամանակների վերջը: Հիսուսն ասել է. «Ինչպես Ղովտի օրերում էր, այնպես էլ կլինի Մարդու Որդու օրերում»: Ձեր հոգին ճշտությա՞մբ է զանազանում այդ: «Ինչպես Ղովտի օրերում էր…»: Հիշեք, որ Ղովտը Ամերիկայի մի խորհրդապատկեր էր: Մենք ունենք դրա ապացույցը: Ի՞նչն էր Սոդոմի մեղքը: Այլասերումը: Արդի Ամերիկայում կանայք այնպիսի անկում են ապրել, որ տղամարդկանց բնական պահանջմունքները այլասերվել են:

67 Երբ մի քանի շաբաթ առաջ Լոս Անջելեսում էի, գործարար քրիստոնյաների հավաքույթին մասնակցելու համար, նրանց թերթերում մի հոդված կարդացի ըստ որի համասեռամոլությունը նախորդ տարվա համեմատ քսան տոկոսով աճել է:

68 Հիսուսն ասում է. «Ինչպես Սոդոմի օրերում էր…»: Ոստիկանությունը անընդհատ հետապնդում է բաժանելու համար տղամարդկանց զույգերը, որոնք որպես կին և ամուսին են ապրում: Կանայք նույն բանն են անում: Նրանք այլասերված են: Նրանց հոգին ապականված է, որովհետև նրանք հոգևոր զանազանություն չունեն: Այդ ամենը անբարոյականություն է և պղծություն: Նրանք միմյանցով չեն կարող բավարարվել: Նրանք նույնիսկ չեն ամուսնանում: Նրանք պարզապես միասին են ապրում մինչև որ… նրանք այլասերված են: Հիսուսն ասել է, որ վերջին օրերում այդպես է լինելու, և հիմա հասել ենք այդ օրերին:

69 Հիշեք, որ Սոդոմի օրերում… կարծում եմ, որ բոլոր հովիվները և աստվածաբանության ուսանողները համաձայն են դրա հետ: Դոկտոր Սկոֆիլդը և մյուսները, դասախոսների մեծ մասը, Չարլզ Ֆուլերը, այս երկրի մեծ գիտակները համաձայնում են, որ Աբրահամը